Բռնակոթ

Բնակչություն՝ 2103

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 111 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 7 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1700 մ,
Կարգավիճակը՝ լեռնային,

Բռնակոթը մտնում էր Մեծ Հայքի Սյունիք գավառի Ծղուկ գավառի մեջ և ըստ հին հարկացուցակի Տաթևի վանքին վճարում էր 12 միավոր հարկ: Անվանվել է նաև Բռնաուտ, Բրնաութ, Բռնակուտ, Մելիք Թանգու գյուղ: Ըստ ժողովրդական ստուգաբանության գյուղի անունն առաջացել է Բուռն /բուռնեցիներ/, կոթ/կոթեցիներ/ անունների միացումից: Հարուստ է պատմաճարտարագիտական հուշարձաններով:
Բռնակոթում հիշատակվում են 3 եկեղեցիներ՝ Ս. Գրիգոր /1704/, Ս. Աստվածածին, իսկ III-ի անունը անորոշ է: Գյուղի շրջակայքում կան մի քանի հին գյուղատեղիներ՝ Կրո, Գյունեյ, Խաչեր, Քարայր:
Այստեղ են ծնվել Ն. Ադոնցը, Ներսես արքեպիսկոպոս Մելիք Թանգյանը, Հր. Ադոնցը, Հր. Քարամյանը, Սովետական Միության հերոսներ Սամսոն Մկրտումյանը, Լիպարիտ Իսրայելյանը:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 683 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 1748 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 2361գլուխ,
- խոզեր՝ 113 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 363:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 610 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 7281 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 6781 հա, որից՝
- վարելահող՝ 1822 հա, խոտհարք՝ 199 հա, արոտ՝ 3218 հա, այլ հողատեսք՝1542 հա
- բնակավայրերի հողեր՝ 276 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 23 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝3 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 9 հա,
- անտառային հողեր՝ 166 հա, որից անտառածածկ՝ 166 հա
- ջրային հողեր՝ 22 հա